ՀԱՂՈՐԴՈՒՄ

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի I կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ

Համայնքի 2020 թ. բյուջեի վարչական մասի I կիսամյակի եկամուտները տարեկան պլանի նկատմամբ կատարվել են 43.9%-ով՝ 697945.9 հազ. դրամ առաջադրանքի դիմաց մուտքերը կազմել են 306496,3 հազ. դրամ:

Սեփական եկամուտները կատարվել են 37.2 %-ով, 294691.4 հազ. դրամի դիմաց կատարվել է 109505,4 հազ.դրամ:

Սեփական եկամուտներից `

Շենք շինությունների գույքահարկի մասով 34000.0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց հավաքագրվել է 12728,2 հազ. դրամ կամ կատարվել է 37.4%-ով.

Հողի հարկի մասով 30500.0 հազ. դրամ, առաջադրանքի դիմաց հավաքագրվել է 10282,4 հազ. դրամ կամ կատարվել է 33.7%-ով.

Փոխադրամիջոցներից գույքահարկի մասով 74000.0 առաջադրանքի դիմաց հավաքագրվել է 28001,2 հազ. դրամ կամ կատարվել է 37.8%-ով.

Տեղական տուրքերի առաջադրանքը 10995.5 հազ. դրամի դիմաց կատարվել է 6213,5 հազ. դրամ կամ կատարվել է 56.5%-ով:

Պետական տուրքերը կատարվել է 39.2%-ով՝ 15000.0 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 5875,3 հազ. դրամ:

Տեղական վճարները պլանավորված 108275.1 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 32406,4 հազ. դրամ կամ կատարվել է 29.9 %-ով, տեղական վճարներից աղբահանության վճարները կատարվել է 42,6 %-ով կամ 48192.0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց գանձվել է 20529,4 հազ. դրամ:

2020 թ. համայնքի բյուջեի վարչական մասի I կիսամյակի ծախսերը տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 39.9 %-ով՝ 697945.9 հազ. դրամ առաջադրանքից կատարվել է 278349,6 հազ. դրամ, որից՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 42,2 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 47.6%-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 32.3 %-ով:

Հանգստ, մշակույթ և կրոն դասակարգումով նախատեսված ծախսերը կատարվել է 30.1%-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 40 %-ով:
Սոցիալական պաշտպանության ոլորտի համար նախատեսված ծախսերը կատարվել է 25.7 %-ով:

2020 թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասում նախատեսվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարումից մուտքեր 227728.0 հազ. դրամ, որից փաստացի մուտքերը կազմել է 238492.4 հազ. դրամ, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարումից մուտքերը նախատեսված 171.3 հազար դրամի դիմաց ուղղակի վաճառքով փաստացի մուտքերը կազմել է 346.3 հազ. դրամ:
Կապիտալ սուբվենցիաների մասով նախատեսված 24972.0 հազար դրամի դիմաց պետական բյուջեից ստացվել է 23071.0 հազար դրամ:

2020 թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել է 54536,0 հազար դրամ, որից՝
Քաղաքապետարանի համար ծառայողական ավտոմեքենայի ձեռք բերման համար 6400,0 հազ. դրամ:
Վարչական սարքավորումների ձեռք բերման համար՝ 17415.5 հազ. դրամ:
2019թ. սուբվենցիոն ծրագրով իրականացված գազատարի կառուցման ավարտական աշխատանքների համար ծախսվել է 24711,4 հազ. դրամ:
Քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների համար՝ 3178,1 հազ. դրամ և թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության համար՝ 337,36 հազ. դրամ:
Կապիտալ ծախսերի իրականացման համար ձեռք բերված նախագծանախահաշվային աշխատանքները կազմել են՝ 2494,0 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ բյուջեի վարչական մասի եկամուտների թերակատարման հիմնական պատճառ է հանդիսացել կորոնավիրուսային համաճարակի հետ կապված մարտ և ապրիլ ամիսների ընթացքում մուտքերի կտրուկ նվազումը: Դա հիմնավորվում է նրանով, որ հունվար- փետրվար ամիսների սեփական եկամուտների 49115.2 հազար դրամ պլանային առաջադրանքի դիմաց մուտքերը կազմել է 52312.6 հազար դրամ կամ կատարվել է 106.5 %-ով: Մայիս հունիս ամիսներին նկատելի է դարձել եկամուտների հավաքագրման աճի դինամիկա:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան